
ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ
ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓՈՅԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ

ՂԱՋՈՅԱՆ Հ. Գ.

Հասարակական կյանքի էությունը, նրա զարգացման ընթացքը և ժամանակի սոցիալ-պատմական իրադրությունը վերլուծելը միշտ էլ եղել է նշանավոր անձանց մտահոգություններից մեկը: Այս առումով միշտ էլ արդիական է մնում Ալբեր Կամյուի այն կարծիքը, որ «... իր դարին դեմ հանդիման արվեստագետը չի կարող շրջվել նրանից, ոչ էլ կորչել նրա մեջ: Եթե շրջվում է նրանից, խոսում է ունայնության մեջ»¹: Որտեղից ենք մենք գալիս, ո՞ր և ինչպե՞ս ենք գնում. այսպիսին է մտահոգության ուղղվածությունը: Իսահակյանը պատկանում է այն անձանց շարքին, ովքեր ընդունում են գրողի, մտավորականի պատասխանատվությունը հասարակության առջև, ստանձնում՝ իրենց ապրած ժամանակաշրջանում հասարակության, պատմության առաջադրած հարցերի պատասխանները փրկություն ու հարցալուծումներ առաջադրելը:

Ողջ կյանքի ընթացքում Իսահակյանը պատմական պրոցեսները ընկալելու, մեկնաբանելու և վերափնաստավորելու ուղղությամբ լուրջ մտահոգություն է ցուցաբերել. վկայությունը հիշատակարանային առաջին գրառումները. «Ապրել-գործել հոգուտ հասարակության, ահա՛ իմ սկզբունքը ... Բայց թե ինչո՞ւ է ապրում հասարակությունը, ի՞նչ է մարդկության նպատակը»²:

Նա անընդհատ ուշադրություն է դարձրել աշխարհում տեղի ունեցող խոր սոցիալական փոփոխություններին, հատկապես դրանց ազդեցությանը հայ ժողովրդի պատմական զարգացման ընթացքին: Խորհելով համայն մարդկային ցեղի ու նրա պատմության վերաբերյալ՝ գրողը հանգում է այն հետևության, որ մարդն արարվել է տանջանքի, վշտի ու ցավի համար, և «Աշխարհը ոչ մեկի սրտովը չէ, ոչ ոք նրա մեջ գոհ չապրեց ու գոհ չգնաց»³: Ի՞նչն է խանգարում մարդկությանը կատարյալ հասարակություն ստեղծելու, գոհ և երջանիկ ապրելու համար: Հին աշխարհի մտածողներից մինչև ժամանակակիցները այս հարցին տվել են ու տալու են բազմաթիվ պատասխաններ, թերևս մեկ բնորոշ օրինակ. «... պետության հիվանդությունն ու նաև միաբանության փլուզումը համապատասխան են մարդկային հոգու՝ մարդկային բնույթի հիվանդությանը: ...Պետության այլասերության ամեն մի տիպական շրջանն առաջանում է մարդկային հոգու, մարդկային բնույթի ցեղի համապատասխան այլասերության շրջանից: ... պետության անկման պատ-

¹ Կամյու Ա., Երկեր, հ. 1, Ե., 2002, էջ 43:

² Իսահակյան Ավ., Հիշատակարան, Ե., 1977, էջ 19-20:

³ Իսահակյան Ավ., Աֆորիզմներ, Ե., 2001, էջ 372:

մութությունն ուրիշ բան չէ, եթե ոչ մարդկային ցեղի կենսաբանական այլասերության պատմություն»⁴:

Իսահակյանի ապրած ժամանակաշրջանն էլ բարդ, դրամատիկ իրադարձություններով լեցուն (միևյանց հաջորդող ռուսական հեղափոխություններ, դրանց անդրադարձը Հայաստանում, քաղաքացիական պատերազմներ, հայկական ջարդեր, Առաջին և Երկրորդ աշխարհամարտեր), ճշմարիտ ոչ մի արվեստագետ չէր կարող անտարբեր անցնել պատմության այս իրադարձությունների կողքով: Հայ պատմիչների և նշանավոր գործիչների աշխատությունների՝ մասնավորապես Խորենացու «Հայոց պատմության» և Նարեկացու «Մատյան ողբերգության» շնորհիվ դեռևս վաղ տարիքից զգացել էր «պատմության համը», որին խառնելով փիլիսոփայական խորհրդածությունը՝ դառնում է պատմության խորքերն ուսումնասիրող և իմաստը որոնող մտածող:

Հայ գրականագիտությունը Իսահակյանի հասարակական-քաղաքական հայացքներին տվել է հետևյալ հակիրճ բնութագիրը. բանաստեղծը հրապարակախոսության մեջ պատմության փիլիսոփայության ըմբռնման և պատմական անցուդարձի ճշմարտացի գնահատականների բազմաթիվ փայլուն օրինակներ է տվել: Համամիտ լինելով այս գնահատականին՝ հավելենք, որ անհրաժեշտ է մանրամասնել, հանգամանալից վերլուծել Իսահակյանի մտորումներն այս առումով: Մասնավորապես, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի վերաբերյալ նշում է. «Մինչև այժմ մեր ոչ մի վիպասան չէր փորձել դիպչել այս նյութին՝ Վարդանանց էպոպեային: Կրոնական գաղափարախոսություն էին տեսել այդ շարժման մեջ կռիվ եկեղեցու և կրոնի համար...»⁵:

Իսահակյանը գտնում է, որ Դեմիրճյանը այս սառույցը կտրեց, արտաքին կեղևի հետևում թաքնված ներքին խոր իմաստը ցույց տվեց, որ Վարդանանց պատերազմը ազգային գոյության պահպանման, ընդդեմ բռնության, ձուլման, այլասերման և հայրենիքի ազատության համար պատերազմ է: Արժեքավոր է հետևյալ բնորոշումը. «...Վարդանանքը» վեպ չէ, կրակ է, կրակ. հայ ժողովրդի պատմության փիլիսոփայությունը»⁶:

Բազմաթիվ առումներով է Իսահակյանը նշում «պատմության փիլիսոփայություն» հասկացությունը, ինչպես օրինակ՝ «Իր անմահ վեպի մեջ ժողովուրդը դրեց իր բովանդակ հոգին՝ անվերջանալի պայքարով և դառնությամբ լի իր պատմության փիլիսոփայությունը, իր փորձը աշխարհի իրերի մասին, իր դարավոր իմաստությունը...»⁷: Իսահակյանը Խորենացու «Հայոց պատմությունը» համարել է հայ պատմափիլիսոփայական առաջին հայեցակարգը: Անշուշտ, «Հայոց պատմությունը» աչքի է ընկնում թե՛ իր աղբյուրների առատությամբ և թե՛ իր գիտական՝ քննական պատմության տեսությամբ ու մեթոդաբանությամբ:

⁴ Պոպեր Կ., Բաց հասարակությունն ու դրա թշնամիները, հ. 1, Պլատոնը, Ե., 2001, էջ 86:

⁵ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու վեց հատորով (այսուհետև՝ ԵԺ - 6) հ. 5, Ե., 1977, էջ 220:

⁶ Իսահակյան Ավ., Աֆորիզմներ, էջ 212:

⁷ Իսահակյան Ավ., ԵԺ - 6, հ. 5, Ե., 1977, էջ 170:

Խորենացին հետադարձ հայացքով վերաիմաստավորում է անցյալը՝ ներկայացնելով այն որպես պատմական ընթացք և որպես ազգային պատմություն: Իսահակյանը կարևորում է այն, որ այս գործում սահմանվում է Հայաստանի և հայերի տեղն ու դերը պատմության ընդհանուր համատեքստում, պատմությունը քննարկվում է ներկայի, անցյալի ու ապագայի կապի մեջ, ընդ որում՝ իմաստավորվում է անցյալը, գնահատվում է ներկան և ուրվագծվում ապագան: Խորենացու երկում կարևորն ու առանցքայինը հայ ժողովրդի ազատասիրության և անկախ գոյության ձգտման գաղափարներն են: Հայ դարավոր պատմության խորքերից եկող այդ գաղափարները հասել են մինչև մեր օրերը. հատկապես XIX դ. հայ պատմափիլիսոփայական ուղղվածության մասին ուսումնասիրություններից մեկում նշվում է. «19-րդ դարի հայ պատմափիլիսոփայության նպատակամիտվածությունը սահմանվում է հետևյալ տեսակների ձևակերպմամբ՝ 19-րդ դարի հայ պատմափիլիսոփայությունը ուղղորդված է ազգային գաղափարի իրականացման անհրաժեշտության հիմնավորմանը: Հայ մտածողների ընկալմամբ՝ ազգային գաղափարի կենսագործումը՝ ազգային պետականության ստեղծումը, ազգի գոյության իմաստի՝ սեփական Պատմություն ունենալու իրավունքի և հնարավորության ազգի գիտակցման արդյունք է»⁸: Հիշյալ ձևակերպումը անվերապահորեն կարելի է կիրառել նաև Իսահակյան մտածողի նկատմամբ: Ուսումնասիրելով և վերլուծելով մարդկության դարավոր պատմության ընթացքը՝ Իսահակյանը հանգում է հետևյալ ընդհանրացման «...պատմության փիլիսոփայությունը մեզ ուսուցանում է, որ մարդկությունը վայրենի, կանիբալ վիճակից, նախամարդու անասնական դրությունից՝ միշտ խորտակելով իր ճանապարհի վրա կանգնող խոչընդոտները, դինամիկորեն գնում է առաջ, դեպի լույս ու զիտություն, ... դեպի ազատություն և կատարելագործում՝ դեպի բարձրագույն կուլտուրան: Եվ կուլտուրան, որպես անողոր թշնամի ռեակցիայի չար ուժերի դեմ, միշտ անդառնալիորեն հաղթանակ է տարել...»⁹:

Այսպիսով, Իսահակյանը հստակորեն սահմանազատում է պատմության առարկայական տիրույթը պատմության փիլիսոփայության ոլորտից: Միաժամանակ, պատմության փիլիսոփայությունն առնչվում է նաև մշակույթին: Ստացվում է պատմություն-մշակույթ-պատմության փիլիսոփայություն փոխառնչությունը: Այդ շրջանակներում Իսահակյանը առանձնակիորեն ընդգծում է և՛ պատմության, և՛ պատմության փիլիսոփայության հակվածությունը դեպի մշակութային արժեքներ:

«Պատմության փիլիսոփայություն» հասկացությունն առաջին անգամ 1765 թ. օգտագործել է Վոլտերը՝ պատմական ընթացքի մեկնաբանման, մարդու պատմական կեցության նկատմամբ անդրադարձի (ռեֆլեքսիայի) իմաստով: Մակայն պատմափիլիսոփայական պատկերացումները սկզբնավորվել են դեռևս հին դարաշրջանում՝ դիցաբանական մտածողության սահմաններում: Արդյո՞ք պատմական գիտությունը (ընդհանուր պատմություն), չի կարող պատասխանել այն հարցերին, որոնք փորձում է վեր հանել պատմափիլիսոփայությունը: Իսկ ո՞րն է

⁸ Միրումյան Ռ., Պատմափիլիսոփայական հայեցակարգերը 19-րդ դարի հայ փիլիսոփայության մեջ, Ե., 2003, էջ 16:

⁹ Իսահակյան Ավ., ԵԺ - 6, հ. 5, էջ 39-40:

պատմության փիլիսոփայության նպատակը՝ ըմբռնել, մեկնաբանել ու իմաստավորել պատմությունը, վերլուծել պատմական ճանաչողությունը և ցույց տալ նրա առանձնահատկությունները: Այս առումով պատմության փիլիսոփայությունը անդրադարձ է պատմության և պատմական ճանաչողության նկատմամբ: Իսկ պատմության օբյեկտիվ ընթացքի նկատմամբ թույլատրելի է արդյոք փիլիսոփայական անդրադարձը: Ներկայումս պատմության փիլիսոփայության վերաբերյալ ուսումնասիրություններում նշվում է, որ այն «... ունի երկու յուրահատկություններ, որոնցով բնորոշվում և առանձնանում է նրա առարկան, բայց որոնք էլ եղել են համենայն դեպս 18-րդ դարի վերջերից սկսած, նրա քննադատության, իսկ երբեմն նրա նկատմամբ ժխտողական վերաբերմունքի պատճառներ: Դրանք են պատմափիլիսոփայական կառուցումների համընդհանրականությունը (ունիվերսալիզմ) և մտահայեցողականությունը»¹⁰: Իր ստեղծագործություններից մեկի կապակցությամբ Իսահակյանը նշել է. «Մեր պատմիչները և մեր գուսանները» - դա մի ամբողջ կոնցեպցիա է»¹¹:

Վերոնշյալ ստեղծագործությունում գեղարվեստականորեն արծարծված են պատմափիլիսոփայական մի քանի հանգուցային հարցեր, մասնավորապես խտացված են պատմության ընկալումը, պատմական հիշողությունը սերունդներին փոխանցելու անհրաժեշտությունը («վառ հավատով փառքերը մեր ավանդեցին որդոց որդի»): Իսահակյանը առանձնացրել է պատմության ընթացքի և նրա ընկալման երկու տրամագծորեն հակադիր հայեցակարգեր: Առաջինը՝ պատմիչների ընկալումն ու շարադրանքը, որպես «Եղեռները, նախճիրները հորդանների արյունըռուշտ», որը բերել է հայրենիքի փլուզման, մինչդեռ գուսանները «վիպերգեցին հաղթանակը դյուցազնների մեր մեծագոր և ծաղրեցին պարտությունը մեր բյուրավոր ոսոխների»: Եթե պատմիչները «հուսացին արդարության մի խուլ աստծու դատաստանի», ապա գուսանները տեսան և՛ ապագան, անընկճելի, ազատ ոգին, և՛ հայրենիքի համար «միշտ բարձրացրած Թուր-Կայծակին»: Պատշաճն հատուցելով պատմիչներին՝ այնուհանդերձ, Իսահակյանը հանգում է այն հետևություն, որ չպետք է ազգի պատմության մեջ տեսնել միայն բացասականը, դժբախտությունները, բացթողումները: Դա կարող է ընկճել ժողովրդի ոգին, անհրաժեշտ է տեսնել, վեր հանել նաև դրականը, ազգին ոգևորել դրանով:

Փիլիսոփայական խոր ենթատեքստ կա Իսահակյանի կողմից բազմիցս օգտագործվող «պատմության զգացում» արտահայտության մեջ. «պատմության զգացում պիտի ունենաս, որ զգաս Անին... ահա հայոց պատմությունը, մեր պատմությունը այս հողի հետ շաղախված է արյունով, սարսափներով»¹²: Իսահակյանը նկատի ունի այն, որ յուրաքանչյուր ժողովրդի պատմությունն անցյալից է գալիս դեպի ներկան, հակառակը չի լինում: Պատմության մեջ, իբրև անցյալի իրողություններ, տրված են պատմական և մշակութային ամբողջականությունները, երբ նշում է, որ «Հայ վարպետները... որմնադիրները քարանյութին... տվել են շունչ, հոգի, կյանք, ձև

¹⁰ Գևորգյան Չ., Փիլիսոփայություն, պատմություն, մշակույթ, Ե., 2005, էջ 267:

¹¹ Իսահակյան Ավ., Ա.Ֆորիզմներ, էջ 211:

¹² Նույն տեղում, էջ 135-136:

ու կերպ... ամեն քարի մեջ իմաստ և գաղափարականացրել են, լեզու դարձրել, խոսեցրել - կենդանի դարձրել, ...¹³», սրանով նպատակ ունի ցույց տալ, որ յուրաքանչյուր մշակույթ արվեստի իր տեսակների միջոցով առանձնացնում է որպես աշխարհընկալման մի եզակի եղանակի մարմնավորում, որն էլ, լինելով մի ամբողջականություն, փոխանցվում է սերնդեսերունդ: Իսահակյանի պարագայում, թեկուզ միայն Անիին նվիրված բազմաթիվ ասույթների ու նկարագրությունների կապակցությամբ նկատելի է այն դրույթի ճշմարտացիությունը, որ «Մշակույթի տարբեր ձևերի մեջ պատմական յուրաքանչյուր առանձին ժամանակաշրջանում դրսևորվում են այդ առանձնահատուկ աշխարհընկալումն ու աշխարհըմբռնումը, աշխարհիկ ու եկեղեցական շինարարական արվեստը և ճարտարապետությունը, օրինակ, ներքուստ կապված են ժամանակի մատենագրության ու մանրանկարչության, երաժշտության ու բանաստեղծության հետ, ... իր պատմությունը շարադրելու ու վերապահելու կերպի հետ...»¹⁴: Իսահակյանը խորապես համոզված է, որ յուրաքանչյուր ժողովուրդ իր մշակույթի միջոցով ստեղծում է իր ոճը. «ոճ ստեղծող, ունեցող ազգերը չեն կորսվի, չեն ձուլվի ուրիշների հետ: Ուրույն անհատականություններ են նրանք, տարբեր... Ոճը ամենահզոր պահպանն է ազգության»¹⁵: Իսահակյանն այն տեսակետին է, որ մշակույթը ազգի պահպանման ամենազխավոր երաշխիքն է: Մշակույթը ժողովրդի պատմական հիշողությունն է: Սա նշանակում է մշակույթի ժառանգորդման անընդհատություն: Պատմական հիշողությունը անգամ հնագիտական պեղումների նշանակության չափ արժեք ունի և ժողովրդի ծագման հարցի լուծման համար տեսական կարևոր նախադրյալ է՝ պատմական հիմնավորումը ապահովելու առումով: Այդ բոլորը ամրագրված է ժողովրդական բանահյուսության մեջ՝ ասքերում, էպոսում. «Մեր ժողովուրդը հայ պատմագիրներից անկախ բանահյուսել է իր բազմադարյան գոյության և լինելիության պատմությունը... որի սահմանները կորչում են անհիշատակ դարերի մշուշի մեջ...»¹⁶: Իսահակյանը առանձնահատուկ վերաբերմունք է ունեցել ոչ միայն հայ, այլև մյուս ժողովուրդների բանահյուսության և էպոսների նկատմամբ: Վիզեն Իսահակյանը «Հայրըս» հուշապատման մեջ նշում է, որ Փարիզում գտնված տարիներին Իսահակյանը Երվանդ Քոչարին խորհուրդ է տվել ուսումնասիրել «Սասունցի Դավիթ» էպոսը, նրա մշակումները. «Երվանդ, դու ծանոթ ես մեր էպոսին, գիտե՞ս մի բան Սասունցի Դավիթի մասին, նրա որդու Մհերի մասին...»¹⁷: Պատմական հիշողությունը նոր սերնդի մեջ վերականգնելու, պատմական իմացությունը թարմացնելու, ստեղծագործողին հոգեկան լիցք հաղորդելու նկատառումներ ունի Իսահակյանը:

Իսահակյանը պատմությանը «կենդանանալու», զգացմունք արթնացնելու խորհուրդ է վերագրում: Դա է ընկած հայրենիքի համար պայքարի հիմքում, որը հզոր

¹³ Նույն տեղում:

¹⁴ **Ղազոյան Հ.**, նշվ. աշխ., էջ 387:

¹⁵ **Իսահակյան Ավ.**, Աֆորիզմներ, էջ 145:

¹⁶ Նույն տեղում, ԵԺ - 6, հ. 5, Ե., 1977, էջ 156:

¹⁷ **Իսահակյան Վ.**, Հայրս, Ե., 2000, էջ 381:

ուժ է դառնում, հողի ուժը հավասարվում է հայրենիքի ուժին: Հայրենիքի համար ամեն մի պայքարող գիտակցում է, որ «Այդ հողն է նրան ծընել ու սընել», առավել ևս՝ «Իր մայրն ու հայրը այդ հողն են դառել»: Պատմության խորհուրդն ակնհայտ է. դա հայրենիքի սերն է, նախնիների նկատմամբ ունեցած հարգանքն ու վստահությունը և սեփական ժողովրդի պատմության ոչ մի էջ չջնջելու, չանտեսելու պահանջը: Ազգի ընդհանուր պատմության մեջ բոլոր ժամանակներն էլ նվիրական են, ուստի Իսահակյանը հիշատակում է Վիշապաքաղ Վահագնին, Աստղիկ աստվածուհուն:

1940-ական թվականներին ազգային զարգացման հեռանկարների վերաբերյալ ունեցած հայացքների և հատկապես «Մեր նախահայրերը» գործի կապակցությամբ Իսահակյանը քննադատվել է, քանի որ «բանաստեղծի այս գործում արտահայտված է ազգայնական պատմահայեցողության ազդեցությունը: Նախ, որ ռումանտիզացիայի է ենթարկված նախահայրերի հերոսականությունն ու նրանց հեթանոսական կրոնը և ապա հայ ազգի հավիտենականության միտքն է զարգացած, իդեալիստական մի հայացք, որ հակասում է ազգերի ու ժողովուրդների պատմական զարգացման հեռանկարին»¹⁸: Քննադատը հիմք է ընդունել խորհրդային գաղափարախոսություն որդեգրած ազգերի հետագա ձուլման տեսանկյունը, մինչդեռ Իսահակյանը պաշտպանում է ազգերի պահպանման սկզբունքը: Քննադատությունից կես դար հետո աշխարհաքաղաքական զարգացումները վերստին հաստատում են Իսահակյանի դավանած սկզբունքի ճշմարտացիությունը և կենսունակությունը: Իսահակյանը առանձնակի հարգանք ու համակրանք ուներ հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ և որոշ նկատառումներով այդ գաղափարները կրողներին ներկայացնում է նաև Գարիբալդիի զինակիցների միջոցով. «Այս, ինչքան լավ է, վեհ է կռվել հայրենիքի համար լավ ընկերների հետ, մեռնել հայրենիքի համար լավ ընկերների գրկում...»¹⁹: Իսահակյանի նկատառումը արդիական է ներկայումս, որովհետև փոխվել է վերաբերմունքը ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Ժամանակակից տեսաբանները գրում են, որ «...համենայն դեպս Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որոշակի բեկում է նկատվում ազգային-ազատագրական շարժումների գնահատման հարցում, ազգային պետություն կազմելու ժողովուրդների ձգտման նկատմամբ վերաբերմունքի մեջ»²⁰: Մինչդեռ XIX դ. երկրորդ կեսերին եվրոպական հասարակությունը ողջունում էր Բուսիայի միավորումը, բալկանյան ժողովուրդների ինքնորոշումը, իսկ այդ ժողովուրդների պետական անկախությանը նպաստող այլ պետությունների զորաբանակները արժանանում էին ազատարարների պատվին: Որպես փոքր ժողովրդի ներկայացուցիչ՝ Իսահակյանն իր համակրանքը չէր թաքցնում ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ:

¹⁸ Ասատրյան Ա., Ավետիք Իսահակյանի կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1940, էջ 71:

¹⁹ Իսահակյան Ավ., ԵԺ - 6, հ. 3, Ե., 1975, էջ 310:

²⁰ Գևորգյան Հ., նշվ. աշխ., 2005, էջ 353:

Քննելով համաշխարհային պատմության ընթացքը և դրան անքակտելիորեն կապված հայ ժողովրդի պատմությունը՝ բանաստեղծը հայերին համարում է պատմության կողմից տուժած ազգ, պատմության խորթ զավակ: Ըստ Իսահակյանի՝ անկախություն ունեցող ազգերն են պատմության հարազատ զավակները: Նա կարևորում է անկախության դերն ու նշանակությունը, միաժամանակ ցույց է տալիս «անկախություն» հասկացության էության խորությունը. այն կարող է լինել և՛ երազ, և՛ ուտոպիա, և՛ իրականություն: Սկզբունքորեն չժխտելով Հայաստանի անկախության հնարավորությունը՝ այնուամենայնիվ, նա մատնանշում մի քանի նախադրյալներ: Դրանք են աշխարհագրական դիրքը, քաղաքական իրավիճակը, հարևանների, մասնավորապես Ռուսաստանի հետ հարաբերությունները, իսկ ավելի որոշակի՝ անգամ վերջինիս վերաբերմունքի կարևորությունը եվրոպական պետությունների կողմից Հայաստանի նկատմամբ բռնած դիրքորոշման հարցում: Թվարկածները նա համարում է արտաքին գործոններ, մինչդեռ անկախության համար անհրաժեշտ են նաև ներքին նախադրյալներ կամ գործոններ: Հիմնականը համարում է ժողովրդի թվաքանակը՝ որպես որոշակի ուժ պետական ինքնուրույնության պահպանման համար: Քանի դեռ այդ նախադրյալները չեն իրացվել, Հայաստանի անկախությունը կմնա երազանք: Իսահակյանը չի ժխտում հայ մտածողների ու գործիչների կողմից նման երազանք ու ցանկություն ունենալը պատմական տարբեր ժամանակներում, ինչպես նաև իր իսկ ապրած ժամանակահատվածում, բայց նշում է, որ «Շնորհք չէ երազ, նպատակ ստեղծելը, այլ նրանք իրականացուցիչ միջոցներ գտնելն է մեծ շնորհքը, խելքը»²¹: Այս առումով նա հայ ազգին, նրա մտավորականությանը և քաղաքական գործիչներին մեղադրում է, որ նրանք երազողներ են և հեռու են գործից: Նա հայ ժողովրդին համարում է միայն «երազող, անգործնական, անհեռատես, միամիտ» ազգ, որն իր պատմությունից դժվարությամբ է սովորում: Այս տեսանկյունից Իսահակյանի պատմափիլիսոփայական հայացքներում ուրույն նշանակություն է ստանում «պատմության դաս» արտահայտությունը, որի հիմնական էությունը պատմության իմացության չափազանց կարևորումն է. դա ոչ միայն մարդկության ինքնաճանաչման ձև է, այլև գոյության և ինքնահաստատման միջոց: Իմանալ պատմություն նշանակում է նախ ճանաչել անցյալը, հասկանալ, ըմբռնել ներկան և կանխագգալ ապագան: Իսահակյանը նաև նկատել է, որ պատմության իմացությունը գայթակղիչ է, ուստի չի բացառվում սխալվելը, մոլորությունը: Արձագանքել է Հայաստանում և աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին՝ ոչ միան փաստելով ու նկարագրելով դեպքերն ու եղելությունները, այլև փորձել է վերլուծել, ըմբռնել դեպքերի ընթացքը: 1916 թ. Գարեգին Լևոնյանին գրած նամակում նշում է, որ «... պատերազմի սկզբում գուշակել էի հայկական ջարդերը և Հայաստանն առանց հայերի, հիմա էլ գուշակում եմ այն, ինչ որ կատարվեց սրանից ուղիղ 10 տարի առաջ Կովկասում... Նոր Գալիցիին»²²: Պատմական «հոտառություն» ունենալը բոլորին տրված չէ: Իսահակյանը հաճախակի է օգտագործել «կռահել», «գուշակել», անգամ «մարգարե

²¹ Իսահակյան Ավ., Աֆորիզմներ, էջ 169:

²² Նույն տեղում, ԵԺ - 6, հ. 6, Ե., 1979, էջ 164:

լինել» հասկացությունները: Շատ դեպքերում դժվար է ուղղակի չհամաձայնել, որ Իսահակյանը կարողանում է պատմական որոշակի իրադրության մեջ «կանխագգալ» դեպքերի հաջորդ ընթացքը: Ի դեպ, այս հարցը խիստ վիճարկելի է: Կ. Պոպերը նշում է, որ «... պատմական համընդհանուր մարգարեությունները ոչ մի կապ չունեն գիտական մեթոդի հետ: Գալիքը կախված է հենց մեզնից, իսկ մենք էլ պատմական որևէ տեսակ անհրաժեշտությունից կախված չենք»²³: Այնուհետև Պոպերը նշում է, որ կան ազդեցիկ սոցիալական փիլիսոփայություններ, որոնք պնդում են, թե ամեն ոք իր բանականության չափով փորձ է անում գուշակելու գալիք իրադարձությունները: Հասարակագիտության խնդիրը երկարաժամկետ պատմական մարգարեություններով հասարակությանը ապահովելն է, համաձայն որի՝ հայտնագործվել են պատմության օրենքները, և այդ օրենքները հնարավորություն են տալիս կանխագուշակելու պատմական դեպքերի ընթացքը: Այս կարգի տեսությունները նա անվանում է «հիստորիցիզմ», որոնց շարքին է դասում նաև մարքսիստներին, և անում է հետևյալ եզրակացությունը, որ «չնայած դրանց ճշմարտանմանությանը, դրանք հիմնված են գիտական մեթոդը ահավոր սխալ հասկանալու ու, մանավանդ, գիտական կանխագուշակության ու պատմական մարգարեության տարբերությունն անտեսելու վրա»²⁴: Պոպերը պատմության ընթացքը կանխագուշակելու հատկությունը համարում է «արատավոր գորություն», որը մարդուն զրկում է պատասխանատվության իր բեռից, բացառությամբ մարքսիստների, ովքեր, այնուամենայնիվ, չեն ուզում, որ պատասխանատվությունից ազատվեն: Մենք ո՛չ միտում և ո՛չ էլ հիմքեր ունենք Իսահակյանին դասելու «հիստորիցիստների» շարքը, որովհետև «դեպքերը գուշակելը» չի համարել որպես պատմության, հասարակագիտության մեթոդ, և ոչ էլ խուսափել է պատասխանատվությունից հասարակության առջև, ընդհակառակը, նա ստանձնել է պատասխանատվություն՝ պատմական որոշակի իրադրության մեջ ճիշտ կողմնորոշվելու համար: Միշտ էլ հեշտ է հետին թվով դատապարտել կամ քննադատական խոսք ասել անցած ժամանակների մտածողների կամ սերունդների հասցեին. չէ՞ որ կարող ենք նաև լինել անարդարացի, որովհետև երբեմն դժվար է տվյալ պատմական իրադրության մեջ ճիշտ կողմնորոշվել: Ուշադրությամբ ուսումնասիրելով 1911-12 թթ. Կոստանդնուպոլսում Իսահակյանի ապրած տարիները և տիրող հասարակական-քաղաքական մթնոլորտը՝ նկատել ենք, որ հայ գործիչների մի մասը դյուրահավատությամբ, հեշտությամբ խաբվեց երիտթուրքերից: Այդ ժամանակի ստոնասիրտ պատմաբաններն ու բանաստեղծներն այն միտքն են հայտնել, որ խաբվելը գրեթե անխուսափելի էր, քանի որ տեղի էին ունենում հայ և թուրք ժողովուրդների համերաշխության ցույցեր, թուրք երեխաները կատարում էին հայկական երգեր, և անգամ պետական նվագախումբը հնչեցնում էր հայկական քայլերգեր: Պատմաքաղաքական այդ մթնոլորտում քչերը կարող էին դեպքերի ընթացքի ավելի հեռուն տեսնել: Նույնիսկ Ադանայի ջարդերից հետո միամտաբար հավատում էին սահմանադրական Թուրքիայի պայծառ ապագային, խորհրդա-

²³ Պոպեր Կ., նշվ. աշխ., էջ 3:

²⁴ Նույն տեղում, էջ 3:

բանի հռչակած՝ բոլոր օսմանցիների եղբայրությանն ու հավասարությանը: Մի շարք մտավորականների շրջանում նույնիսկ կարեկցանքի տրամադրություններ էին նկատվում ցարական լծի տակ տառապող արևելահայերի հանդեպ: Իսահակյանը այդ տարիներին զարմանալիորեն զուսպ է եղել, շատերի նման չի խանդավառվել: Անգամ Հիշատակարանում այդ տարիներին չկան գրառումներ: Կան հատուկենտ նամակներ՝ հասցեագրված Հովհ. Թումանյանին, Գ. Լևոնյանին և Վ. Աբովյանին: Մասնավորապես, վերջինիս գրած նամակում դժգոհություն է հայտնում, որ «մարդիկ ընկած են փող աշխատելու և կոպիտ վայելքի հետևից, բարոյապես ընկած են, կեղծավոր. շահասեր և անհյուրընկալ. խոստումներ կան և ոչ մի գործ»²⁵: Ընդհանուր առմամբ, Իսահակյանի սրտով չէր ո՛չ գրական և ո՛չ էլ հասարակական-քաղաքական մթնոլորտը: Իհարկե, այդ օրերին անչափ դժվար էր կանխագգալ մոտավորատ աղետը: Իսահակյանի պահվածքը, կեցվածքը հուշում էր, որ չափազանց զգայուն, խորաթափանց բանաստեղծը, ենթագիտակցաբար, այնուամենայնիվ, զգացել էր, որ վտանգ է պարունակում այդ անդորրը, որ կեղծ է ու շինծու տիրող մթնոլորտը: Իսահակյանը ինչ-որ չարագուշակ բան էր տեսնում այդ անդորրի ու լրության մեջ, և նա չսխալվեց: Զգուշացնող իմաստ կա «Ողբում եմ» արձակ բանաստեղծության մեջ պատմության խորհուրդը չընկալող գործիչների նկատմամբ՝ գրված Խորենացու նշանավոր ողբի տրամաբանությամբ և ոճավորումով. «... իսկ գիտուններդ՝ ոգու այդ նանիթ, հեղզ գաճաճները, որոնք կույր ու գուլ օրհասիդ հանդեպ, ... վա՛յ գիտուններդ, որոնք շան նման այն ազատարար ձեռքն են կծոտում, որ իրենց վզի շղթան է կոտրում, ...»²⁶:

Վերլուծելով Առաջին աշխարհամարտի մեջ ներքաշված հզոր ու փոքր պետությունների և ազգերի բռնած դիրքը՝ նա նշում է. «Այս պատերազմը բոլոր կովողների գույները ցույց տվեց: Ցույց տվեց, որ բոլորն էլ բորենիներ են, խաբողներ, փոքր ազգերի դահիճներ, և ամենքի դրոշակը հյուսված է կեղծիքներից, խոստումներից, խորամանկություններից և մեծ գաղափարների (եղբայրություն, քաղաքակրթություն, ազգերի ազատություն, իրավունք, արդարություն) անուններից»²⁷: Իսահակյանը հստակ ցույց տվեց, որ բոլոր կարգի պետական, ազգային փոխհարաբերությունների մեջ կա շահ, և այդ շահը պրակտիկ, նյութական շահն է, որը վեր է ամեն ինչից, և դատարկ հնչյուն են, թղթի կտոր ու խաբկանք՝ խղճի բոլոր դրսևորումները, բարոյականությունը. «Ամբողջ Եվրոպայում պետությունների մեջ մորալ կրոն չկա, միայն ես, շահ, նյութ, փող. ուրիշ ո՛չ մի աստված, միայն ոսկի»²⁸:

Ղևոնդ Ալիշանին նվիրված հուշապատումում շատ բնորոշ մի օրինակ կա, ըստ որի՝ հայկական կոտորածների ժամանակ կարդինալ Թերզյանը մեկնում է Հռոմ և խնդրում պապին, որ դիմի քրիստոնյա մեծ պետություններին՝ Անգլիային, Ռուսիային, Ֆրանսիային, Գերմանիային, որպեսզի ջարդարար թուրքի ձեռքը բռնեն, և հետևում է պատասխանը. «Այդ քրիստոնյա մեծ պետություններն են

²⁵ Իսահակյան Ավ., ԵԺ - 6, հ. 6, էջ 108:

²⁶ Նույն տեղում, հ. 3, էջ 20:

²⁷ Իսահակյան Ավ., Հիշատակարան, էջ 319:

²⁸ Նույն տեղում, էջ 318:

հայերին կոտորողները, ես որի՞ն դիմեմ»²⁹: Մա ցույց է տալիս, որ Իսահակյանը եղեռնի պատճառները տեսնում է շատ իրական հիմքի վրա. կրոնական քողի հետևում քրիստոնյա պետությունների դաժան շահամոլությունն է. պատմական շահը իրար է կապում մեծ ազգերին, իսկ պատմական ճակատագիրը՝ փոքր ազգերին: Նա նկատել է նաև, որ փոքր ազգերը ավելի շատ փորձում են հենվել բարոյական օրենքների վրա: Նման մեկնակետից ելնելով՝ քննում է հայ ժողովրդի պատմության ողբերգական շրջանը՝ 1915 թ. և Առաջին համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածը, և հանգում հետևյալ եզրակացության. «Մենք ձգտում էինք ազատության՝ կովելով, գոհվելով՝ հույսներս դրած քրիստոնյա, լուսավոր քաղաքակրթված Եվրոպայի վրա, երեխայի պես հավատալով, թե Եվրոպան Հայաստանը կազատե, թուրքին կպատժե...»³⁰:

Փոքր ժողովուրդներն ունեն իրենց արժեքային համակարգը. դա հայրենիքի սերն է ու անկոտորում ոգին, որոնք պատմական որոշակի ճակատագրական ժամանակահատվածում կարևորում են և հակակշռում մեծ ազգերի նվաճողական շահամոլությանը: Ելնելով սրանից՝ Իսահակյանը հավաստում է պատմական այն ճշմարտությունը, որ թշնամին կարող է նվաճել երկիրը, կողոպտել, կեղեքել, բայց անկարող է նվաճել ամենակարևորը՝ հայրենիքի սերն ու ազատասեր ոգին, որի հետևանքով փոքր ժողովուրդը պահպանում իր գոյությունը: Այս արժեքները իսկական արժեքներ են, որոնք չեն կեղծվում, և այս արժեքների դերը Իսահակյանը շատ բարձր է գնահատում: Ոչ միայն հայ, այլև մյուս փոքր ազգերի պատմական ճակատագրի վրա հենվելով՝ Իսահակյանը համեմատում է սրանց բարոյական արժեքների օրինակները: Այս տեսանկյունից հատկանշական է «Ժողովրդի քնարը» բալլադը: Ստեղծագործությունում հակադրված են անհամատեղելի արժեքները. մի կողմից բռնակալությունը, մյուս կողմից՝ այն գովերգելու բռնի պահանջը: Սերբ ժողովրդի ծեր գուսանը հավատարիմ է հայրենիքին ու ճշմարտությանը, նա չի կարող կեղծել ու ստել: Իսահակյանը հավատարիմ է մնում իր դավանած սկզբունքներին՝ ասելով, որ այն ամենը, ինչ ձեռք է բերվում ի հաշիվ բարոյական անկման, նույն տրամաբանությամբ էլ արժեզրկվում է: Վաղ թե ուշ, միևնույն է, պատմությունը մերժում է կեղծ արժեքները: Մա է պատմության դասն ու դրանից արվող գլխավոր եզրակացությունը:

Պատմության մեջ ոճիրներ շատ են գործվել, բայց Իսահակյանի բնորոշմամբ՝ «Ամենամեծ ոճիրը պատմության մեջ գենցիդիզմն է՝ ջնջել, բնաջնջել մի ազգ, մի ժողովուրդ, *անճիտել* – ազգասպանություն»³¹: Այս կարգի ոճիրների թվին նա դասում է հրեաների նկատմամբ կատարված ոճիրները և թուրքերի ծրագրած հայկական ջարդերը: Քննելով հատկապես հայ ազգի նկատմամբ կատարվածը՝ Իսահակյանը դա համարում է մեծ ազգերի կողմից փոքր ազգերի նկատմամբ անտարբերության հետևանք. «Լոզանի կոնֆերանսի և ներկա ժամանակի միջև ընկած են Երկրորդ համաշխարհային պատերազմը և Նյուրնբերգի դատավարու-

²⁹ Իսահակյան Ավ., ԵԺ - 6, հ. 5, էջ 12:

³⁰ Իսահակյան Ավ., Հիշատակարան, էջ 349:

³¹ Իսահակյան Ավ., Աֆորիզմներ, էջ 147:

թյունը, որոնք ակնհայտ կերպով ցուցադրեցին մարդկության դեմ ուղղված հանցագործությունների ամբողջ ահավորությունը և միջազգային լայն հասարակության գիտակցությանը հասցրին այն ճշմարտությունը, որ մինչ այդ կատարված նմանօրինակ հանցագործության՝ հայերի ցեղասպանության և բռնագաղթման անպատիժ մնալը և դրանց հետեվանքների համար պատասխանատվություն չստանձնելը ուղղակի նախադեպը եղան հիտլերյան ֆաշիզմի կողմից իրականացված զանգվածային ցեղասպանության, բռնագաղթումների, բռնագաղթերի համար: «Պատմությունը մեզ կարդարացնի», հիմա ո՞վ է հիշում հայերի ցեղասպանությունը: «Գործեցեք» կարգախոսները անմիջականորեն նկատի ունեն հայերի ցեղասպանությունը լուրջության մատնելու և մոռացության տալու քաղաքականությունը...»³²: Այս գնահատականը ժամանակակից քաղաքագիտական տեսությունների լույսի ներքո հայկական հարցի ուսումնասիրության արդյունքն է, որի հետ, անկասկած, համաձայն կլինեք ինքը՝ Բսահակյանը:

Վերլուծելով հայկական ջարդերը, համաշխարհային երկու աշխարհամարտերը, ինչպես նաև մարդկության պատմության ընթացքում կատարված բազմաթիվ ոճիրները՝ Բսահակյանը հանգում է մի հետևության, որ ի տարբերություն սովորական, առօրեական իրադրության մեջ մարդ սպանելուն, զանգվածաբար մարդ սպանելը կամ ոչնչացնելը (այդ թվում նաև՝ ազգերին) սովորական երևույթ չէ, նախաձեռնվող և իրականացված սպանությունները հիմնավորելու համար անհրաժեշտ է տեսություններ ստեղծել: Բսահակյանը համոզված նշում է, որ եվրոպական պետությունների համար Հայկական հարցը ավելի քան ագիտացիայի միջոց է, շահ ստանալու միջոց: Բոլոր մեծ տերություններն էլ միայն ճառում են, ընդ որում՝ մարդասիրությունից, ազատությունից: Բսահակյանը, չնայած այս ամենին, եվրոպական պետությունների նկատմամբ հայ ժողովրդի դրսևորած վարքագծում մի շատ հետաքրքիր իրողություն է նկատել. «Մեր մեջ անբուժելի ռոմանտիզմ կա դեպի Ֆրանսիան և Անգլիան, իբրև ազատությունների, մարդասիրությունների երկրների ... Այնինչ Ֆրանսիայում միայն փողոցների պատերի վրա են գրված «ազատություն, եղբայրություն, հավասարություն» խոսքերը»³³: Բսահակյանը նկատել է, որ Հայկական հարցն էլ իր հերթին խանգարում է եվրոպական պետություններին, որովհետև եվրոպական երկրները «ուզում են մուսուլմանությանը սիրաշահել, փայփայել՝ կողոպտելու համար»³⁴: Բհարկե, այս շարքում նա տեսնում է նաև Ռուսաստանին, բայց նրա նկատմամբ մի քիչ այլ կարծիքի է: Բսահակյանը նկատում է, որ եվրոպացիները Ասիայում շահ ունեն, ուստի գտնում է, որ հային փրկելու ճանապարհներից մեկը Ասիայի հմայքի սքողումն է եվրոպացիների աչքում, իսկ մյուսը՝ «պիտի գորացնել ռուսին, որ մեր բոլոր թշնամիներից ավելի ազնիվն է ու քիչ վնասակարը...»³⁵: Մինչդեռ Անգլիային ձեռնտու է եղել հզոր Թուրքիան՝ որպես պատնեշ Ռուսաստանի դեմ, իսկ Սան Ստեֆանոյի 16-րդ

³² Գևորգյան Հ., Ազգ, ազգային պետության մշակույթ, Ե., 1997, էջ 69:

³³ Բսահակյան Ավ., Հիշատակարան, էջ 325:

³⁴ Բսահակյան Ավ., Աֆորիզմներ, էջ 171:

³⁵ Նույն տեղում:

հողվածը հենց Անգլիայի ջանքերով դարձավ 61, որպեսզի ռուսների ձեռքից վերցնի հայության պաշտպանությունը:

Բսահակյանը համոզված է, որ մեծ ազգի հոգեբանությունը այլ է, փոքրինը՝ այլ: Փոքր ազգը պետական փոխհարաբերություններում և քաղաքականության մեջ դժվար է ըմբռնում մեծ ազգերի բռնած դիրքը, իսկ մեծ ազգերն էլ դժվար են հասկանում փոքր ազգերի հոգին: Մեծ ազգը հաղորդակից չէ փոքր ազգի հոգեկան տառապանքին. այդ խոր հոգեկան զգացումը օտար ազգի մարդկանց անհարիր է, մինչդեռ ազգային ինտելիգենցիայի առաջավոր հատվածին նման ցավի զգացումը ներհատուկ է: Բսահակյանը մտորել է նաև մյուս ժողովուրդների պատմության ընթացքի մասին: Նրա աչքի առջև Եվրոպայում 1930-ական թթ. ձևավորվում և հզորանում է ֆաշիզմը, որը 1933 թ. Հիտլերի գլխավորությամբ Գերմանիայում անցավ իշխանության գլուխ: Բսահակյանը իրավացիորեն ցույց է տալիս գերմանական ժողովրդի տեղն ու դերը համաշխարհային մշակույթի ոլորտում: Արտացոլելով իր համակրանքը դասական Գերմանիայի հանդեպ՝ այն համարում է «բանաստեղծների ու փիլիսոփաների հայրենիք»: Բսահակյանը վերլուծում է հիտլերյան ֆաշիզմի տեսության հիմքում ընկած գաղափարական հայեցակարգերը: Խորանալով այդ տեսության արմատների բացահայտման ուղղությամբ՝ նա գտնում է, որ «չընդունելով Դարվինի էվոլյուցիոն թեորիան, նրանք որդեգրել են կենդանական աշխարհում նրա գոյության կռվի կոնցեպցիան՝ թույլի ոչնչացումը ուժեղից, և այն տարածել մարդկային հասարակության վրա: Նույնիսկ իրենց անսահման ատելի հրեա ցեղից ծագած Բերգսոնի ինտուիցիայի գաղափարը շաղախել են իրենց սուբյուրի մեջ: Սորելի բռնության կոնցեպցիան, Ջեյմսի պրագմատիզմը...»³⁶: Ծանոթ լինելով ժամանակի ոչ միայն եվրոպական, այլև ամերիկյան փիլիսոփայական դպրոցներին ու ուղղություններին՝ Բսահակյանը կապ է տեսնում փիլիսոփայական ուսմունքների, քաղաքականության և կուսակցությունների ծրագրերի հիմքում ընկած տեսությունների միջև: Ըստ նրա՝ հիտլերականները եկել են կործանելու ոչ միայն գերմանական ժողովրդի, այլև ողջ եվրոպական մշակույթը, և ցավով նշում է. «Ուրեմն, իզո՞ւր անցան գերմանական ժողովրդի համար Հերդերի, Շիլլերի մարդասիրական պատգամները, իզո՞ւր անցավ Կանտի բարոյական իմպերատիվը»³⁷: Տարակուսանք է հայտնում, թե արդյոք Գերմանիան այլևս չի՞ ապրելու բարոյական օրենքներով, չէ՞ն լինելու առաջադեմ մտածողներ: Այս կարգի հարցերը Բսահակյանը քննում է՝ կապված նաև ազգային խնդիրների հետ, հատկապես վտանգ տեսնելով այն գաղափարախոսության մեջ, որի վրա հենված էր ֆաշիստական ռեժիմը, համաձայն որի՝ ուժեղ ազգերը պետք է իշխեն թույլ և փոքր ազգերի վրա: Բսահակյանը նկատում է, որ վերջինս իրականացվում է «Աստված ստեղծեց մարդկությանը և զոջաց, ապա ստեղծեց Գերմանիան, որ ուղղե մարդկությանը»³⁸ կարգախոսին համապատասխան: Առաջինը այն կիրառեցին հրեա ժողովրդի նկատմամբ: Ֆաշիզմի գաղափար-

³⁶ Բսահակյան Ավ., ԵԺ-6, հ. 5, էջ 328:

³⁷ Նույն տեղում, էջ 337:

³⁸ Նույն տեղում, էջ 331:

րական ակունքներից մյուսը, ըստ Իսահակյանի, արիական ցեղերի տեսությունն է: Դրա հեղինակը XIX դ. կեսերի ֆրանսիական գործիչ Արթուր Գոբինոն է, որին Իսահակյանը համարում է «մի կես բանաստեղծ ու կես գիտնական» և անգամ «սալոնների շաղակրատ» մի անձնավորություն: Ըստ այս տեսության՝ ցեղերի մեջ միայն արիական ցեղն է ուժեղ և ստեղծագործող, իսկ արիական ցեղերի մեջ ամենամաքուր արյունը կրողը գերմանացիներն են: Ռասայական այս տեսությունը, միանալով պրուսական շովինիզմին, դարձավ ռասիստական գաղափարախոսություն, որն էլ Իսահակյանը համարում է «ռեակցիայի իդեոլոգիա»: Իսահակյանը համոզված է, որ պատմությունը կրկնվելու միտում ունի ոչ միայն դեպքերի ու իրադարձությունների նմանությամբ, այլև պատմական անձերի նմանությամբ. «Պատմությունը կրկնվել է: Մեր օրերի Աթթիլան՝ Հիտլերը»³⁹, - նշում է Իսահակյանը: Թե՛ դեպքերի և թե՛ անձերի առումով կրկնվելու պարբերությունը տարբեր է. մեծամոլ Վիլհելմ կայսեր սանձազերծած պատերազմից հետո, որի ժամանակ իլվեց 20 միլիոն մարդկային կյանք, 25 տարի հետո նույնը կատարում է Հիտլերը: Պատմության կրկնությունը նա չի դիտում որպես դեպքերի մեխանիկական նմանություն կամ հաջորդափոխում: Պատմության ընթացքի ու կրկնության մեջ տեսնում է տրամաբանություն, որը մասնավորապես պատերազմների ժամանակ ուղղորդվում է հոգուտ արդար կողմի, պաշտպանվողի: Մաբարոյահոգեբանական կողմ էլ ունի: Նկատի առնելով այս ամենը՝ 1941 թ. օգոստոսին համոզված գրում է. «Մեր գործը արդար է, պատմության լոգիկան մեր կողմն է»⁴⁰: Իսահակյանը պատմության տրամաբանություն ասելով այն նկատի ունի, որ համաշխարհային պատմության մեջ կա օրինաչափություն, ինչպես որ բնության մեջ: Ինչևէ, պատմության տրամաբանությունը պատմության փիլիսոփայության ուսումնասիրության ոլորտին է պատկանում: Հեզելը պատմության փիլիսոփայության հիմնական գաղափարը համարում է այն, որ «համաշխարհային պատմությունը բանական ընթացք ունի», որը միտված է դեպի պետաիրավական այնպիսի կարգ, որն առավելապես կիրականացնեք ազատությունը մարդու հասարակական կեցության մեջ: Իսահակյանն էլ պատմության տրամաբանությունը տեսնում է դեպի ազատություն և արդարություն տանող ճանապարհի մեջ: Հեզելի համար այդ բացարձակ ոգու այլակեցության արդյունք է, մինչդեռ Իսահակյանն այն տեսնում է ազգի, նրա հերոսների, ազգի ոգու կրողների գործողություններում: Պատմության տրամաբանությունը առարկայացնում է պատմությունը, պատմական նոր իրադրության մեջ վերականգնվում է պատմական հիշողությունը. «Այս նոր հերոսների մեջ վերակենդանացել է հայության հին հերոսների ներշնչող, անձնուրաց ոգին»⁴¹: Ազգի ոգին, ավանդույթները պահպանվում ու շարունակվում են ոչ միայն պատերազմի ժամանակ, պատերազմի դաշտում, այլև բոլոր ժամանակներում և իրադրություններում: Պարզ իրադրության մեջ կոնկրետ օրինակով Իսահակյանը ազգի հավերժության գաղափարը մարմնավորում է որդեկորույս,

³⁹ Նույն տեղում, էջ 249:

⁴⁰ Նույն տեղում, էջ 334:

⁴¹ Նույն տեղում, էջ 394:

պառաված ճնողի կերպարով, որը օջախը միշտ վառ է պահում՝ համոզված, որ «չէ կարելի օջախը մարել, ծուխը հանգցնել, դուռը փակել»: Պատմությունը չմոռանալ նշանակում է մատը պատմության զարկերակի վրա պահել: Պատմության նման ըմբռնումը և իմաստավորումը Իսահակյանին հանգեցնում է «պատմական հավատի» ըմբռնման: Այդ զգացումը ժողովրդին ապրելու և հարատևելու հոգեբանական հնարավորություն է ստեղծում: Այդ հավատն ու ապրելու իրավունքի գիտակցումը բերում են պայքարի անընդհատության, որը կարող է լինել անգամ շատ երկարատև («Մերունդ իջավ գերեզման, սերունդ ելավ օրրանից»): Մերունդներին է փոխանցվում պատմական ճակատագիրը, անհատի ճակատագիրը անբաժան է ազգի ճակատագրից:

Պատմության հարցերը, որպես գիտության, նրա մեթոդոլոգիայի հայեցակարգային ուղղվածություն, որը տանում է պատմափիլիսոփայական խնդիրների շոշափման, Իսահակյանը քննարկում է պատմաբան Լեոյին նվիրված գործում: Անկեղծորեն նշելով Լեոյի մեծ վաստակը հայոց պատմության շարադրման ուղղությամբ՝ նա, այնուհանդերձ, գտնում է, որ անգամ եվրոպական պատմագրությանն էլ ծանոթ լինելով՝ Լեոն «անկարող եղավ եվրոպական իմաստով պատմաբան լինելու»⁴²: Պատճառներից մեկը, ըստ Իսահակյանի, այն էր, որ եվրոպական մտածելակերպի «յուրացումը օրգանապես չէր տեղի ունեցել նրա մտքի լաբորատորիայում»⁴³:

Իսահակյանը Լեոյի մյուս էական թերությունը տեսնում է նրանում, որ «Շատ հաճախ աչառու և կուսակցամոլ՝ նրա գրիչը թույն էր հղում և նշտարի սրություն ուներ»⁴⁴:

Ցավով է նշում, որ «Ճիգով կարդում է Մարքս, Էնգելս, Պլեխանով, Լենին և ... տքնում է յուրացնել պատմական մատերիալիզմի մեթոդոլոգիան, նրանով լուսաբանելու Հայոց հին և նոր պատմությունը և վերստին մի անհնարին տաժանքով գրելու Հայոց պատմությունը, ամբողջ պատմությունը նոր լույսի տակ»⁴⁵:

Պատմության շարադրումը մարքսիստական մեթոդոլոգիայով ենթադրում է պատմության նկատմամբ կիրառել փիլիսոփայական սկզբունքներ: Մարքսն էլ չի հրաժարվել պատմական օրինաչափության գաղափարից, բայց այդ օրինաչափությունը չի կարող բխեցվել «մարդու բնույթից», նրա վերացական էությունից, այլ բխեցվում է հասարակության քննությունից: Չնայած դրան՝ «մարքսիզմը որպես իր բաղկացուցիչ մաս չունի պատմության փիլիսոփայություն (ինչպես որ չունի բնափիլիսոփայություն՝ մետաֆիզիկա), և որ պատմության մատերիալիստական ըմբռնումն էլ, հասարակական – տնտեսական ֆորմացիաների իր հիմնական գաղափարներով, վերառել ու ներառել է պատմափիլիսոփայական ամբողջ ինդրակարգը»⁴⁶: Մեթոդաբանության տեսանկյունից պատմության մատերիալիս-

⁴² Նույն տեղում, էջ 82:

⁴³ Նույն տեղում, էջ 82:

⁴⁴ Նույն տեղում, էջ 80:

⁴⁵ Նույն տեղում, էջ 82-83:

⁴⁶ Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 294- 295:

տական ըմբռնումն էլ քննադատվում է պոզիտիվիստական պատմափիլիսոփայության հետ համահավասար՝ որպէս սոցիոլոգիզմի դրսևորում: Երկու տեսություններն էլ արտապատմական հասարակագիտական պատկերացումներով ու սկզբունքներով են մոտենում պատմությանը: Ջուզահեռներ անցկացնելով՝ տեսնում ենք, որ Իսահակյանի մտավախությունը նրանումն է, որ մեկ ազգի պատմությունը փորձում են վերաշարադրել՝ մեկ այլ ազգի պատմությանը նմանակելով, եթե անգամ ոչ ամբողջ պատմությունը, ապա թեկուզ և պատմական մի որոշակի հատվածը: Դրա հետևանքով զգալիորեն նսեմացվում է ազգային պատմությունը:

Դեռևս Կանտը և Հեգելը նկատել էին «պատմություն» հասկացության երկակիությունը. եթե պատմությունը վերցվում է ամբողջությամբ, ունի իրեն ներհատուկ որոշակի կառուցվածք, ներքին օրինաչափություն, «պատմության պլան» (Հեգել), և ըստ այդմ ստեղծվում է որևէ մեկ կաղապար, որի մեջ տեղավորվում է մարդկության ամբողջ պատմությունը: Պատմափիլիսոփայական այսպիսի «կաղապարային» շարադրանքը Կանտը և Հեգելը անվանում էին փիլիսոփայական համաշխարհային պատմություն՝ ի տարբերություն պատմաբանի շարադրած ընդհանուր պատմության, որը նրանք անվանում էին էմպիրիկ պատմություն:

Իսահակյանը յուրովի է նկատել «պատմություն» առարկայի երկակի իմաստը. ա) անցյալի եղելությունների, դեպքերի ամբողջություն ու հաջորդափոխություն, բ) պատմական մի որոշակի կամ էլ ամբողջ ժամանակահատվածի վերաշարադրանքն է նոր սերունդների պատմաբանների կողմից: Այստեղ հնարավորություն է ստեղծվում անցյալի պատմությունը կեղծելու, պատմական դեպքերն ու իրադարձությունները գլխիվայր շրջելու. «Ամբողջ տարվա ընթացքում մենք տեսանք, որ եվրոպացին ձգտում էր թաղել Հայկական հարցը, անտարբերությամբ հայտարարելով, թե Հայաստանում հայ չկա, ցավում ենք, բայց ինչ արած, Հայաստան չի կարող ստեղծվել... և այս ամենը իրենց հինգ տարվա շարունակական խոստումներից հետո. նրանք Հայաստանի նահատակությունը և արյունը շինեցին իրենց համար ազիտացիայի միջոց...»⁴⁷: Նա պատմությունը կեղծողների շարքին է դասում ժուռնալիստներին, սենատորներին, գրողներին և տարբեր կարգի միսիոներներին: Եթե այլազգի մտածողները և գործիչները մեկ որոշ ազգի պատմությունը կարող են կեղծել, ապա նույն ազգի քաղաքական տարբեր կողմնորոշում ունեցող գործիչներն էլ, այդ թվում՝ պատմաբաններ, պարզապէս կարող են հեշտ չկողմնորոշվել: Իսահակյանը նրբորեն անդրադառնում է նաև այդ հարցին՝ դարձյալ վկայակոչելով Լեոյին. «Ես կոտորած ձեռքերովս ի՞նչ կռիվ եմ մղել մեր պահպանողականների դեմ, բայց պատմությունը ապացուցեց, որ Պետրոս Սիմեոնյանները, Աշրգյանները, Օրմանյանները իրավունք ունեին: Նրանք իրատես եղան, նրանք ճանաչում էին լիրբ աշխարհը, նրանք գիտեին, որ մեծ պետությունները մեզ պիտի շահագործեն, վաճառեն և վերջը թքեն մեզ վրա...»⁴⁸:

Իսահակյանը ակնհայտորեն հասկացնել է տալիս, որ պատմաբանի խնդիրը ոչ միայն պատմության փաստերի իմացությունն է և շարադրանքը, այլև պատմական

⁴⁷ Իսահակյան Ավ., Հիշատակարան, էջ 340:

⁴⁸ Իսահակյան Ավ., ԵԺ - 6, հ. 5, էջ 85:

իրադրությունում ճիշտ կողմնորոշվելը: Լեոն մեդադրում է մտավորականության մի մասին անգիտության մեջ, մինչդեռ կային ավելի իրատես մտավորականներ, որոնք եվրոպական պետություններին լավ էին ճանաչում, և հետին թվով ավստրալիացի խոստովանում է. «Դու գիտես, որ մեր արհամարհած Պետրոս Սիմեոնյանը 1880 թվին գրել է, թե՛ վազն անցեք Հայկական հարցից, թողեք 61-րդ հոդվածը, որ դժբախտությունների դուռ պիտի բանա: Հայ ժողովուրդը բարեկամ չունի, Հայաստանը Բուլղարիա չէ, ետևը ցար կանգնած չկա: Կկոտրեն ժողովրդին, մեր արյունով իրենց հաշիվները կմաքրեն ... Մարգարենք էին նրանք, իսկ մե՞նք ...»⁴⁹:

Բսահակյանը մտավորականության խղճին է թողնում տվյալ պատմական իրադրության գնահատման պատասխանատվության ծանրությունը, որը հետագայի համար կարող է նաև ճակատագրական նշանակություն ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական առումներով: Բսահակյանը տվյալ պատմական իրադրությունը կարևորում է պատմաբանի, ազգի մտավորականության, ազգի ճակատագրի խնդրում, ուստի դժվար է առարկել այն տեսակետին, որ պատմական յուրաքանչյուր դարաշրջանի հատուկ է որոշակի «իրադրություն», իսկ վերջինս առանցքային նշանակություն ունի մարդկային գոյությունը վերլուծելիս: Հենց իրադրությունն էլ անկրկնելի է, որը պայմանավորում է մարդկային ճակատագրի եզակիությունը (Կ. Յասպերս): Բսահակյանի մտածելակերպը հանգում է իրադրության անկրկնելիության, եզակիության ընդունմանը թե՛ կոնկրետ անձի և թե՛ ժողովուրդների ճակատագրում: Այդ դեպքում ինչպես վերաբերվել պատմության մեջ օբյեկտիվ օրինաչափությունների հարցին, միգուցե ավելի ընդունելի է, որ «առհասարակ պատմական պրոցեսների ուսումնասիրության և մեկնաբանման մեջ պետք է հրաժարվել մեկընդմիջտ կանխատրված օբյեկտիվ օրինաչափության գաղափարից, որի համաձայն շարժվում է պատմական ընթացքը, և ընդունել, որ պատմական օրինաչափությունն ինքը կազմավորվում է հենց պատմական պրոցեսի ընթացքում»⁵⁰:

Պատմական օրինաչափությունները երբեմն ավելի ճիշտ ընկալելու վերաբերյալ հետաքրքիր, ինքնատիպ դիտարկում ունի հենց ժողովրդի առումով, որն էլ անվանում է ինքնապահպանության բնագոյ՝ կոնկրետացնելով հայ ժողովրդի օրինակով. «Թողեք հայ ժողովրդին իրեն գլխին: Նա... ավելի լավ կարող էր, գիտեր պաշտպանել, քան թե մտավորականները, գրքի մարդիկ ուզեցին նրան պահպանել և կործանեցին: Ժողովուրդը ինքնապահպանության ... իմաստուն բնագոյ ունի...: Նրա այս բնագոյի շնորհիվ է, որ հայությունը հասավ մինչև մեր օրերը»⁵¹: Ինչևէ, այս միտքը չընկալենք պարզունակ կերպով, որը կարող է տանել մտավորականության, պետության քաղաքական կուսակցությունների դերի նսեմացման, չէ՞ որ սրանք նպաստում են ազգի զարգացմանն ու առաջընթացին, մինչդեռ ազգի ֆիզիկական գոյությունը պահպանելը դեռևս առաջընթաց չի նշանակում, պարզապես դրա

⁴⁹ Նույն տեղում, էջ 85-86:

⁵⁰ **Գևորգյան Հ.**, նշվ. աշխ., էջ 266:

⁵¹ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ավ. Բսահակյանի ֆ., N 413-416:

երաշխիքն է ապահովում: Նա մերժում է աշխարհաքաղաքացիությունը. «...կոսմոպոլիտիզմը մը ֆայլ է և չոր, աշխարհը մարդու հայրենիքը չէ, այլ հեռու տեղեր, օտար ավեր, ուր մարդ իրեն պանդուխտ է զգում, հայրենիքը միշտ քաշում է, ...»⁵²:

Պատմաբանը տալիս է պատմական դեպքերի շարադրանքը, վերլուծում պատմական պրոցեսների ընթացքը: Մինչդեռ պատմության ընթացքը և նրանում գործող օրինաչափությունները հետաքրքրում են ոչ միայն պատմաբաններին: Պատահական չէ, որ «Քսաներոդոս դարի կեսին պատմական գիտության տեսության հարցերի շուրջը ծավալված բանավեճերին, մասնագետ պատմաբաններին համահավասար, մասնակցում էին փիլիսոփաները, որոնք նաև նախաձեռնողը եղան մի քանի հանգուցային հարցադրումների, մասնավորապես՝ պատմական գիտության մեջ գիտելիքի օբյեկտիվության առանձնահատկությունների, պատմական օրենքների բնույթի մասին և այլն»⁵³:

Նկատեցինք, որ ուշադրություն դարձնելով պատմությանը ընդհանրապես, հայոց պատմությանը մասնավորապես՝ Իսահակյանը պատմական եղելությունները գնահատելիս ներմուծել է փիլիսոփայական հասկացություններ ու կատեգորիաներ և կողմնակիցն էր գեղարվեստի պատմության և փիլիսոփայության սերտ դաշինքին. «... ի տարբերություն ամերիկյան պատմագրության, Արևմտյան Եվրոպայի երկրներում, որոնց մշակույթի մեջ գորեղ է փիլիսոփայական ավանդույթը, երբեք գերիշխող չդարձավ պատմական գիտությունը փիլիսոփայությունից օտարելու միտումը»⁵⁴: Երկար տարիներ ապրելով Եվրոպայում՝ հայ մշակույթը՝ գրականությունն ու փիլիսոփայությունը, եվրոպական չափանիշներին համապատասխան տեսնող Իսահակյանը, որը Հայաստանը համարել է «...միջնորդ հակամարտ քաղաքակրթությունների և գաղափարների. Եվրոպայի և Ասիայի լավագույն գաղափարներն ու արժեքները քո մեջ են գմբեթավորվում...»⁵⁵, պատմափիլիսոփայությանը վերաբերվում էր եվրոպական չափանիշներով: Իսահակյանը մերժում էր պատմաբանների կողմից նախատրամադրված, կանխակալ սկզբունքները՝ որդեգրման սկզբունքները:

Պատմաբանը ոչ միայն պետք է ունենա պատմության իմացություն, այլև պետք է օժտված լինի ինքնուրույն պատմական մտածողության կարողությամբ, պատմական նյութի ընձեռած հնարավորության սահմաններում դրանց շուրջը խորհրդածելու ունակությամբ. այսպիսին էր պատմաբանի նկատմամբ Իսահակյանի կարծիքը:

⁵² Իսահակյան Ավ., Հիշատակարան, էջ 297:

⁵³ Գևորգյան Հ., նշվ. աշխ., էջ 327:

⁵⁴ Նույն տեղում, էջ 325:

⁵⁵ Իսահակյան Ավ., Աֆորիզմներ, էջ 100-101:

ИСТОРИКО-ФИЛОСОФСКИЕ ВЗГЛЯДЫ АВ. ИСААКЯНА

КАДЖОЯН Г. Г.

Резюме

Публицистические и художественные произведения Ав. Исаакяна являют собой блестящий пример философского осмысления истории. Ав. Исаакян четко разграничивает историю и философию истории. Исследуя исторический ход развития общества и историю армянского народа как неотъемлемую часть всемирной истории, писатель называет армян пасынком истории, ибо, на его взгляд, родным детищем истории являются лишь народы, приобретшие независимость.

В своих историко-философских исследованиях писатель часто оперирует выражением “уроки истории”. Согласно писателю, знать историю означает знать прошлое, понимать настоящее и предвидеть будущее. Оценивая исторические факты и события, писатель апеллирует к философским понятиям и категориям, указывая на необходимость связи истории с эстетикой и философией.